

Համառոտ պատմութիւն Հայ Կաթողիկէ (Կաթոլիկ) Եկեղեցու

1- Հայոց Եկեղեցու ծագումը.

Հայ պատմիչների (Փ. Բուզանդ, Մ. Խորենացի,
Ագաթանգեղոս եւ ուրիշներ) վկայությամբ, հայոց դարձը՝
քրիստոնեության ընդունումը եւ այն պետական կրոն հռչակելը
տեղի է ունեցել Տրդատ Գ թագաւորի օրոք (298-330):
Սկզբում Տրդատը խիստ հալածանքների է ենթարկում
քրիստոնեաներին: Դաժան տանջանքներից հետո մահապատժի են
ենթարկվում Հռիփսիմեն, Գայանեն եւ նրանց շատ
հետեւորդներ: Տանջանքներից հետո Խոր Վիրապն է նետվում
Հայաստանում քրիստոնեության հաստատման մէջ գլխավոր
դեր խաղացած Գրիգորը: Սակայն տարիներ անց, հանրահայտ
դէպքերից ու Գրիգորի հրաշագործություններից հետո Տրդատը
ոչ միայն ազատում է նրան, այլ հրաժարվում է
հեթանոսական կրոնից, ընդումում քրիստոնեությունը եւ 301թ.
այն դարձնում է Հայաստանի պետական կրոն:

Գրիգորը իր գործունեությամբ լուսավորեց Հայոց երկիրը
քրիստոնեական վարդապետությամբ, մարդկանց լուսավորեց նոր
ու առաջավոր գաղափարներով եւ այդ պատճառով էլ կոչվեց
Լուսավորիչ: 303թ. նա Տարոնի Աշտիշատ ավանի մէջ
կանգնեցրեց առաջին հայ եկեղեցին եւ ապա՝ նախկին
հեթանոսական մեհեյանի (Սանդանամետի) տեղում կառուցեց
նաեւ Ա. Էջմիածնի մայր տաճարը:

Այն տպավորությունը, որ Սբ. Գրիգոր Լուսավորիչն է
ստեղծել հայոց եկեղեցին եւ այդ պատճառով էլ Հայ
Առաքելական եկեղեցին անվանում են «Հայ Լուսավորչական»:
(Հայերէն շարադրանքով), կամ «Հայ Գրիգորյան» (ռուսական
շարադրանքով), արմատապես սխալ է: Հայտնի է որ մինչեւ
Գրիգոր Լուսավորիչը Հայաստանում գործել են հայոց
եկեղեցու 10 ավանդական հայրապետներն ու եպիսկոպոսները:
Այդ անվանումը երեւան է եկել միայն 1836թ., երբ
(ռուսական կառավարությունը Հայոց Եկեղեցուց պահանջեց
վարդապետական անվանում տալ Հայ Եկեղեցուն եւ միայն
այդ ժամանակ հրատարակված «Պոլոսենիե»-ի մէջ ի հայտ
եկան այդ անվանումները: Ա. Էջմիածնը հայ Եկեղեցին
համարում է առաքելական՝ այսինքն Առաքյալների կողմից
հիմնադրված: Ըստ Հայ Առաքելական Եկեղեցու Հայաստանում
գործել եւ հայոց Եկեղեցին են հիմնադրել Սբ. Թաղեսս եւ
Սբ. Բարդուղիմեսս առաքյալները: Այդ մասին վկայում են Փ.

Բուզանդը, Մ. Խորենացին, Հ. Դրասխանակերտցին, Հ.
Մամիկոնյանը եւ շատ ուրիշներ:

Ասողիկը վկայում է մէկ այլ առաքյալի՝ թումասի
Հայաստանում գտնվելու մասին։ Այլ պատմիչներ հիշատակվում
են Քրիստոսի այլ աշակերտների եւս Հուդա, Սիմոն
Նախանձահույզ, Մատատիա, Ղեքես եւ Հովհաննես
Ավետարանիչ։

Վկայակոչելով Ագաթանգեղոսի մոտ հիշատակված
«Տեսիլը», ըստ որի ուռենու ճյուղով Հիսուս Քրիստոսն ինքն
է ցույց տվել, թէ որտեղ պէտք է հիմնվի Հայոց Եկեղեցին,
Հայ Առաքելական Եկեղեցին գտնում է նաեւ, որ ինքը
հիմնադրվել է Հիսուս Քրիստոսի կամքով եւ Նրա կողմից։

Առանձին հեղինակներ վկայում են, որ թաղեռսը իր
հետ Հայաստան է բերել այն Գեղարդը, որով զինվորները
խոցել են խաչված Քրիստոսին, նրա արյամբ ներկված պսակը
եւ նրա կողմից օծված սրբազն յուղը։ Հիշատակվում է, որ
Բարդուղիմեոսն էլ իր հետ Հայաստան է բերել Քրիստոսի
Օրհնյալ հացի մի մասը։

2- Քաղքեղոնի ժողովը.

Մինչեւ Քաղքեղոնի 451թ. Տիեզերական ժողովը եւ դրանից
երկար տարիներ հետո էլ Հայոց Եկեղեցին անբաժանելի մասն
էր կազմում Համաշխարհային, Տիեզերական կամ
Ընդհանրական Եկեղեցու։ Մինչեւ Քաղքեղոնի ժողովը որեւէ
լուրջ տարածայնություններ չկային Հայոց եւ այլ Եկեղեցիների
միջեւ։ Հայոց Հայրապետը ընտրվում էր Հայաստանում, բայց
ձեռնադրվում էր Կեսարիայում։ Ագաթանգեղոսը, Մ.
Խորենացին, Փ. Բուզանդը եւ այլ հայ պատմիչներ
հաստատում են, որ մինչեւ Պապ թագավորը, Հայոց բոլոր
Հայրապետները ձեռնադրվում էին Կեսարիայում։ Նրանց
վկայութեամբ այնտեղ են ձեռնադրվել Փառենը, Շահեննը եւ
Ներսեսը։

Ագաթանգեղոսը հիշատակում է, որ Արք. Գրիգոր
Լուսավորիչը 302թ. 16 նախարարների ուղեկցությամբ եւ
թագավորի հրովարտակով մեկնել է Կեսարիա, որտեղ
Ղեկոնդիոս Արքեպիսկոպոսից ձեռնադրվել է Հայոց Հայրապետ։
Այնուհետեւ հիշատակված է, որ Տրդատ թագավորը «... կրկին
գնաց հունաց աշխարհը աստուածաներ կոստանդինոսի
ժամանակ... ուխտ դրեց նրա հետ հաստատ մնալու
աստվածապահատության մեջ»։ մեկ այլ տեղ Ագաթանգեղոսը
վկայում է Տրդատի ու Գրիգոր Լուսավորիչի Հոռմ գնալն
ու ջերմորեն ընդունվելը կայսրի եւ մեծ հայրապետ, արքունի
դռան եպիսկոպոս Եվսեբիոսի կողմից։

Մինչեւ օրս էլ շատերի հանգիստն է խուզում այսպես
կոչված «Դաշանց թուղթը», ըստ որի Լուսավորիչը գնացել է
Հոռմ եւ քահանայապետ է ձեռնադրվել Հոռմի Սեղբեստրոս

(Սիլվեստրոս) պապի կողմից, որն էլ նրան է հանձնել այդ թուղթը: Մ. Օրմանյանը ժխտում է այս փաստը եւ թուղթը համարում է խաչակիրների ժամանակ հորինված: Նույն կարծիքին են նաեւ հայ կաթողիկէ հեղինակ Հ. Կոգյանը, ակադեմիկոս Պ. Հակոբյանը եւ ուրիշներ: Սակայն Մ. Չամչյանը եւ զգալի թվով այլ հեղինակներ հավատում են այդ «թղթի» խկությանը:

Բոլոր դեպքերում խախուտ են այն պնդումները, թէ Գրիգոր Լուսավորիչն ու նրա հաջորդները կախում չեն ունեցել կեսարիայից եւ այնտեղ չեն ձեռնադրվել: Դրանից բոլորովին չի նսեմանում Հայոց Եկեղեցու դերն ու հեղինակությունը: Հայ Առաքելական Եկեղեցին անվերապահորեն՝ ընդունել եւ մինչեւ օրս էլ ընդունում է տիեզերական առաջին երեք ժողովների՝ Նիկիայի (325թ.), Կ.Պոլսի (381թ.) եւ Եփեսոսի (431թ.) որոշումները (Ուղղափառ Եկեղեցին ընդունում է առաջին 7 տիեզերական ժողովների որոշումները -Մ.Ա.):

Հայ Առաքելական Եկեղեցին հատկապես խիստ բացասական դիրք է ընդունել 451թ. Կ. Պոլսի մոտ գտնվող Քաղքեղոն բնակավայրում (Հայերեն՝ Գատրգյուղ, այժմ Ստամբուլի արվարձաններից մեկն է -Մ.Ա.)տեղի ունեցած ժողովի որոշումներին: Այդ ժողովին հայերը, բացի Միջագետքի թեմի երեք եպիսկոպոսների, չմասնակցեցին, որովհետեւ ընդամենը 4 ամիս էր անցել նշանավոր Ավարայրի ճակատամարտից եւ հայոց Կաթողիկոսն ու շատ երեւելի հոգեվորականներ գտնվում էին պարսկական բանտերում կամ աքսորավայրերում:

Քաղքեղոնում սահմանվեց Քրիստոնեության կարեվոր դավանաբանական սկզբունքը՝ «Քրիստոսը կատարյալ Աստված է եւ կատարյալ մարդ, Աստված ծշմարիտ եւ մարդ ծշմարիտ»: Մ. Չամչյանը մեջբերում է այդ ժողովի հետեւյալ սահմանումը. «...կատարյալ Աստված եւ կատարյալ մարդ, հավասար Հոր ըստ Աստվածության եւ հավասար մեզ ըստ մարդկության, նոյն ինքն Տեր Հիսուս Քրիստոսը. մի դեմք եւ մի անձ միավորյալ երկու բնությամբ (Մ. Չամչյան, հ.Բ., էջ 684): Իսկ նախորդ՝ Եփեսոսի 431թ. ժողովում շարադրած էր հետեւյալ սահմանումը. «Հիսուս Քրիստոսի մեջ աստվածայինն ու մարդկայինը միավորված են անխառն ու անբաժանելի կերպով»: Հայ Առաքելական Եկեղեցին ընդունում է հենց այս ժողովի սահմանումը եւ այս ուսմունքը ձեվակերպում է հետեւեալ խոսքերով. «Մի բնություն ասեն, որպես անբաժանելի միություն երկու բնության» (Մ. Չամչյան, հ.Բ., էջ 229): 1841թ. Նիկոլայ Ա կայսրին գրած նամակում Ամենայն Հայոց Կաթողիկոս Հովհաննես կարբեցին այն արտահայտում էր հետեւյալ ձեվակերպմամբ. «... Հայերը

խոստովանում են Հիսուս Քրիստոսի մեջ երկու բնություն. առանց խառնման եւ առանց աստվածությունը մարդկության վերածելու եւ կամ մարդկությունը աստվածության, եւ թէ երկու բնությունը՝ այսինքն աստվածային հատկությունները մնացին ամբողջությամբ անփոփի» (Ամատունի Կ., Էջմիածնի

Կաթողիկոսի մեկ թուղթը, «Ավետիք», 1948, էջ 144-149):

Քաղքեղոնի ժողովը ընդունեց նաեւ քրիստոնեական Եկեղեցու 27 հիմնական կանոններ: Սակայն առանձնահատուկ ուշադրության է արժանի այդ ժողովի ... 28-րդ կանոնը: Տարօրինակ այն է, որ բուն ժողովը ընդունեց միայն 27 կանոններ: Սակայն ժողովի փակումից հետո, երբ ժողովից արդեն հեռացել էին Հռոմի պապի ներկայացուցիչները, Բյուզանդիայի Մարկիանոս կայսեր եւ Կ. Պոլսի Անատոլիոս Պատրիարքի պահանջով, ընդամենը 84 եպիսկոպոսների ստորագրությամբ (իսկ ժողովին մասնակցում էին որոշ տվյալներով 600-630, այլ տվյալներով՝ 350 եպիսկոպոսներ -Ա.Ա.) հաստատեց նոր՝ 28րդ կանոնը, ըստ որի մյուս պատրիարքությունների նկատմամբ հավասար ճանչվեց նաեւ Կ. Պոլսի պատրիարքությունը: Պարզաբանենք, որ մինչ այդ կային չորս պատրիարքություններ, ըստ չորս ավետարանիչների՝ Մատթեոսինը՝ Անտիոքում, Մարկոսինը՝ Ալեքսանդրիայում, Ղուկասինը՝ Հռոմում եւ Հովհաննեսինը՝ Եփեսոսում: Արշակ թագավորի հրամանով պատրիարքություն էր ստեղծվել նաեւ Հայաստանում, սակայն այն չէր ճանաչվել արեվմտյան Եկեղեցիների կողմից: Շատերի կարծիքով Քաղքեղոնի ժողովի շուրջը հետագայում ծագած եւ մինչեւ օրս շարունակվող վիճաբանությունները վերաբերվում են ոչ այնքան դավանաբանական հարցերին, որքան այս 28-րդ կանոնին: Ն. Աղոնցը գրում է «...451-ին Կ. Պոլսի Պատրիարքին ենթարկվեցին բոլոր Մետրոպոլիտները: Եփեսոսն ու Կեսարիան կորցրեցին իրենց իրավունքներն ու դիրքերը 28րդ կանոնով: Մրանով է հիմնված նաեւ հայոց մերժողական դիրքը հանդեպ Քաղքեղոնի: Խզումի պատճառը նվերապետական էր եւ ոչ թէ վարդապետական»:

Արեւելյան Աթոռները այդ կանոնը չնդունեցին: Հռոմի Լեւոն պապը եւս պաշտպանեց նրանց իրավունքները եւ չհաստատեց այս կանոնը: Դրա պատճառը ոչ միայն այն էր, որ նա պաշտպանեց ճշմարտությունը, այլ առաջին հերթին նաեւ այն, որ նա զգում էր (եւ ոչ առանց հիմքի), որ ընդունելով 28րդ կանոնը, հենց Հռոմի Եկեղեցին ապագայում կարող էր կորցնել իր դիրքը: Կ. Պոլիսը կայսրանիստ քաղաք էր եւ անկասկած ձգտում էր հետագայում իւլել նեաւ Հռոմի աթոռի առաջնությունը:

Մ. Օրմանյանը եւս գրում էր, որ Քաղքեղոնի մեջ հարցը այնքան աստվածաբանական չէր՝ Քրիստոսի բնությանը

Հայող, որքան հայրապետական՝ աթոռների փոխադարձ հարաբերությունների եւ առավելագույն ազդեցունների խնդիրը:

3- Քաղքեղոնի ժողովի արձագանքները Հայաստանում.

Քաղքեղոնի ժողովի պատճառով առաջացած հուզումներն ու խլրտումները տարածվեցին արեվելքի շատ երկրներում: Հստ հայ կաթողիկէ հեղինակների, մինչեւ Դ դարի սկիզբը հայոց Եկեղեցին լուելան հավանություն է տվել այդ ժողովի որոշումներին եւ բացահայտորեն դուրս չի եկել նրա որոշումների դեմ: Հստ նրանց, Հայաստանում հակաքաղքեղոնական շարժման ծավալման պատճառը եղել է այն, որ այդ ժողովի որոշումներն ու «Լեվոնի թուղթը» Հայաստան են բերվել հակաքաղքեղոնական ասորի հոգեվորականների կողմից, որոնք թարգմանելիս դիտավորյալ աղավաղել են նրանց մտքերն ու ձեւակերպումները: Դրա հետեւանքով քաղքեղոնականությունը Հայաստանում սկսեցին շփոթել նեստորականության հետ, սկսեցին նզովել եւ նեստորին եւ Քաղքեղոնը եւ Հռոմի Պապին: Եւ այդ այն դեպքում, երբ Քաղքեղոնը ինքն էր դատապարտել եւ նզովել նեստորի ուսմունքը:

Ակադեմիկոս Ստ. Մալխասյանը, գտնելով, որ Քաղքեղոնի ժողովից հետո Հայաստանը անկասկած միաբնակ էր (Մոնոֆիզիտ), միաժամանակ նշում էր, որ «... Հունաստանում ուսած նոր սերունդը, թարգմանչական խումբը բնականապես երկարնակ էր, այսինքն ընդունում էր Քաղքեղոնի դավանաբանությունը...» Եկեղեցին պաշտոնապես դեռ չեղոք էր մնում. առաջին երկդիմի որոշումը Քաղքեղոնի դավանաբանության դեմ հայոց եկեղեցական ժողովը կայցրեց միայն 508թվին, ժողովից (Քաղքեղոնի) 57 տարի հետո (Ս. Խորենացի, Հայոց պատմույուն, Ստ. Մալխասյանի ներածությունը, էջ 16-17):

Ն. Մատի կարծիքով «մի ժամանակ քաղքեղոնականությունն ու հակաքաղքեղոնականությունը հավասար ուժով ապրում էին հայ ժողովրդի մեջ, որ մի ժամանակ հայոց մեջ եղել է մի ամբողջ քաղքեղոնական գրականություն»: Նրա կարծիքով 8րդ դարում Հայաստանում ստեղծվել էր մի այնպիսի կրիտիկական պահ, երբ հայտնի չէր դեռ, թէ ո՞վ կհաղթի՝ քաղքեղոնականները, թէ հակաքաղքեղոնականները: Ն. Աղոնցի կարծիքով հակաքաղքեղոնականները հաղթանակ տարան միայն 8րդ դարի սկիզբներին:

Հայ առաքելական շատ հեղինակներ եւ որոշ հայ կաթողիկէ (կաթոլիկ) հեղինակներ գտնում են, որ Քաղքեղոնի ժողովը առաջին անգամ պաշտոնապես դատապարտվել է

Դվինի 506թ. Եկեղեցական ժողովի կողմից: Սակայն Հայ կաթողիկէ Եկեղեցու գլխավոր տեսաբաններից մեկը՝ Հ. Կոգյանը գտնում է, որ Դվինի ժողովում խոսք անգամ չի եղել Քաղքեղոնի մասին: Այլ խնդիր է «Բ» թուղթը, որը ստորագրել էին Բարգեն Ա. Կաթողիկոսն ու քսան հայ եպիսկոպոսներ: Նա գտնում է, որ նույնիսկ այդ թղթում էլ Քաղքեղոնականությունը չի նզովվել, այլ միայն հայոնապես ընդունվել է Զենոն կայսեր «Հենետիկոնը»: Այդ թղթում միայն երկու անգամ է հիշատակված Քաղքեղոն անունը եւ երկու դեպքերում էլ այն հավասար է դրվում եւ նույնացվում նեստորականության հետ:

Այլ կարծիքի է Մ. Չամչյանը: Նրա համոզմամբ հենց Բարգենն է եղել Քաղքեղոնի ժողովի առաջին հերքողը: Հայ կաթողիկէ հեղինակների մեծ մասը գտնում է, որ Քաղքեղոնի ժողովը առաջին անգամ դատապարտվել է հայոց կաթողիկոս Ներսես Բ Աշտարակեցու կամ Բագրեւանդցու գահակալության տարիներին (548-557թթ.), Դվինի երկրորդ ժողովի կողմից (554թ.): Մ. Աբեղյանը պառակտման հիմնական պատճառը համարում է այն, որ «մարդկայինը մի բնություն է կազմում աստվածայինի հետ, եւ ոչ թէ երկու բնությունն էլ բաժան-բաժան է մնում մի անձում»: Դվինի այդ երկու Եկեղեցական ժողովներից բացի քաղքեղոնականությունը բազմիցս քննարկվել է նաև հետագա այլ Եկեղեցական ժողովներում: Ընդունվել են եւ այն դատապարտող եւ այն ընդունող որոշումներ: Վիլյամ Տեր-Ղազարյանի կարծիքով հայ Եկեղեցու ձեւական բաժանումը կաթողիկէ Եկեղեցուց տեղի է ունեցել միայն 607թ. Դվինի երրորդ Եկեղեցական ժողովում (Վիլյամ Տեր-Ղազարյան, Հայ կաթողիկէ Եկեղեցու պատմությունը, Armenian Church Historical Studies, էջ 219):

Քաղքեղոնականների ու հակաքաղքեղոնականների միջեւ պայքարը շարունակվեց նաև հետագա տարիներին: Սուր վեճերի առիթ է հանդիսանում Ամենայն Հայոց կաթողիկոս Եղի Ա Փառաժնակերտցու (630-641) եւ նրա հաջորդների դավանանքի հարցը: Ստ. Օրբելյանը վկայում է, որ «... հայությունը հիշալ աղանդի (քաղքեղոնականության կամ կաթողիկէյության -Ս.Ա.) մեջ մնաց վեց կաթողիկոսների օրոք՝ ութսուն հինգ տարի, մինչեւ Հովհանն Օձնեցին, որի ձեռքով Հայաստանը նորոգվեց ու մաքրվեց այդ աղանդից»: Բյուզանդիայի Հերակլ կայսեր առաջարկով (ըստ հայադավան հեղինակների՝ ճնշմամբ) 631-632թթ. (այլ տվյալներով՝ 633թ.) Կարին քաղաքում գումարված Եկեղեցական ժողովը, մեկամսյա քննարկումից հետո իր համաձայնությունը տվեց միաբանվելու բյուզանդական Եկեղեցու հետ եւ գտավ, որ Քաղքեղոնի երկու բնության վարդապետությունը համաձայն է Սբ. Գրոց եւ Սբ. Հայրերի հետ: Հայերն ու հույները միասին

Հաղորդվեցին: Ստ. Օրբելյանը հիշատակում է, որ Եզրը, Հոգեվորականներն ու իշխանները «... չկարողացան վերահասու լինել նրա (Քաղքեղոնի -Ա.Ա.) ծածուկ ու անհայտ աղանդներին... Եզրը համաձայնություն տվեց եւ տգիտաբար մոլորվեց»:

Ինչ խոսք, հայադավան հեղինակները ժխտում են այս փաստը եւ գտնում, որ Եզրն ու նրա հաջորդները երբեք չեն եղել քաղքեղոնական իսկ Կարնո ժողովին մասնակցել են ընդամենը չորս եպիսկոպոսներ եւ մի քանի վարդապետներ: Նրանք նաև պնդում են, որ եթե Եզրը եւ նրա հաջորդները ընդունել են քաղքեղոնականությունը, ապա ինչո՞ւ էր այդ ժողովից ընդամենը 20 տարի հետո կոստանդինոս կայսրը կրկին ձեռնարկում միաբանվելու հարցը:

Վիլյամ Տեր-Ղազարյանը, վկայակոչելով հայ առաքելական Եկեղեցու եպիսկոպոս Ներսոյանին, գտնում է, որ երկու հայրուր տարվա ժամանակահատվածում՝ հինգերորդ դարի կեսերից մինչեւ 7րդ դարի կեսերը, երբ Հայաստանը բաժանված էր բյուզանդական եւ պարսկական կայսրությունների միջեւ, երկրի արեւմտյան մասի եպիսկոպոսները մեծ ի մասամբ քաղքեղոնական էին (Հարաբերությունների մեջ էին Կաթողիկէ Եկեղեցու հետ), իսկ արեւելքում գտնվողները՝ հարում էին հակադիր գաղափարների: (Վիլյամ Տեր-Ղազարյան, նշվ. աշխ., էջ 219):

Վ. Տեր-Ղազարյանը, վկայակոչելով նույն հայ առաքելական Հոգեւորականին, նշում է, որ 862թ. Շիրակավանի ժողովը, ձեւականորեն որոշել է, որ Հայերի ու Հույների միջեւ (այդ ժամանակ հույնները դեռ չէին բաժնվել ընհանրական Եկեղեցուց -Ա.Ա.) էական տարբերություններ չկան:

4- Հայոց Եկեղեցին սկսած Կիլիկիայի հայկական թագավորության չրջանից մինչեւ 17րդ դարի վերջը

Հետագա տարիներին քաղքեղոնականության եւ հակաքաղքեղոնականության միջեւ պայքարը մերժ հանդարտ տպում էր նոր ուժով: Այդ պայքարը ոչ միայն դավանաբանական էր, այլ նաև քաղաքական: Մեծ Հայքի հայերի հակաքաղքեղոնական դիրքորոշումը շատ բանով կապված էր այն փաստի հատ, որ Բյուզանդիան, հայերին քաղքեղոնական դարձնելով, ձգտում էր իրեն ենթարկել ոչ միայն Հայոց Եկեղեցին, այլ նաև Հայ Ազգը եւ ձուլել այն իր կայսրության մեջ: Դեռ մոռացության չեր մատնվել այն փաստը, որ 4-րդ դարի վերջերին, նույնիսկ տասնյակ տարիներ առաջ, քան պարսկական մասում, բյուզանդական կայսրությունը վերացրել էր Արշակունիների հայկական թագավորությունը եւ իսկատ

սահմանափակել նախարարների իրավունքները: Դրա հետեւանքով
 էլ հակաքաղքեղոնական շարժումը նաեւ առաջին հերթին
 հակաբյուզանդական շարժում էր:
 Բյուզանդիայի վարած նենդ քաղաքականության
 հետեւանքով 1045թ. կործանվեց բագրատունիների
 թագավորությունը Մեծ Հայքում: Պետականությունից զրկված
 Հայաստանը չկարողացավ լուրջ դիմադրություն ցույց տալ
 արեւելքից հայտնված սեղուկ-թուրքերի հորդաներին:
 Կործանվեցին հայկական բազմաթիվ գյուղեր ու քաղաքներ,
 հազարավոր մարդիկ սրի քաշվեցին կամ գերեվարվեցին: Այս
 պայմաններում անհնարին դարձավ նաեւ Հայոց կաթողիկոսի
 եւ կաթողիկոսարանի գործունեությունը բուն Հայաստանում:
 Իսկ այդ նույն ժամանակամիջոցում նպաստավոր պայմաններ
 էին ստեղծվել Կիլիկիայում, որտեղ ստեղծվել էր Կիլիկիայի
 հայկական թագավորությունը: Այս էր պատճառը, որ Հայոց
 կաթողիկոսի Աթոռը եւս տեղափոխվեց այնտեղ եւ հաստատվեց
 մայրաքաղաքում՝ Մսում:

Մինչեւ Կիլիկիայի հայկական թագավորության ստեղծումը
 Հայոց Եկեղեցին պաշտոնական շիման մեջ էր միայն
 բյուզանդական Եկեղեցու հետ: Դրությունը փոխվեց խաչակրաց
 արշավանքիների ժամանակ: Այժմ արդեն Հայոց Եկեղեցին
 պաշտոնական կապեր հաստատեց Հռոմեական կամ Լատին
 Եկեղեցու հետ: Կիլիկիայի հայ թագավորներն ու ժողովուրդը
 հույս ունեին Հռոմի Պապի եւ եկոպապական պետությունների
 աջակցությամբ նախ պահպանել եւ ամրապնդել Կիլիկիայի
 հայոց թագավորությունը եւ ապա, հարմար պահի դեպքում
 ազատագրել նաեւ Մեծ Հայքը:

Ամենայն Հայոց կաթողիկոս Գրիգոր Պահլավունին
 (1116-1166թթ) իր եղբոր՝ Ներսես Շնորհալու հետ 1141 եւ 1143
 թվականներեին մասնակցել է Անտիոքի եւ Երուսաղեմի
 Եկեղեցական ժողովներին, որոնց նպատակը հայ եւ
 քաղաքեղոնական Եկեղեցիների միաբանելն էր:
 Խոսելով այս դեպքերի մասին՝ Կիրակոս Գանձակեցին
 նշում է, որ դրանով վերստին նորգվեց դաշինքը, որ կար
 Սուլը Գրիգորի, Տրդատի եւ Կոստանդինոս կայարի ու
 Սեղբեստրոսի միջեւ (Կ. Գանձակեցի, Հայոց Պատմություն, Էջ
 67):

**Դ. Ալիշանը նշում է, որ ի նշան բարեկամության
 Հռոմի Պապը (իննովկենտիոս Բ-1130-1143) Գրիգոր
 Պահլավունուն է ուղարկել «Հայրապետական քող ու
 գավազան» (Ալիշան, Շնորհալի, Էջ 186):**

Նույն քաղաքականությունը շարունակվեց նաեւ Ներսես
 Շնորհալու հայրապետության տարիներին: Կաթողիկէ բոլոր
 հեղինակները միանշանակ պնդում են, որ Շնորհալին այդ
 միության ջերմ կողնմակից էր: Մ. Զամշյանը մեջ է բերում

Ներսես Շնորհալու կողմից Բյուզանդիայի Կայսրին գրած նամակի հետեւյալ տողերը. «... այլ՝ մի եւ նույն Քրիստոս է մարմին եւ է անմարմին. մարմին ըստ մարդկության՝ որ առավ եւ անմարմին ըստ աստվածության՝ որ ուներ եւ նույնն է տեսանելի ու անտեսանելի, չոշափելի եւ անշոշափելի, ժամանակի մեջ եւ առանց ժամանակի, որդի մարդու եւ որդի աստծո... Քանզի Քրիստոսը մարդ լինելով՝ բնությամբ անմահ էր... Մեռյալ էր մարմինը նույն կենդանի էր աստվածությունը»

(Մ. Զամշյան, Հ.Ա., էջ 103-104):

Կասկածից վեր է, որ հայ ժողովրդի այդ մեծ զավակը, հանճարեղ բանաստեղծն ու փիլիսոփան, աստվածաբանը, նաև քաղաքական գործիչ էր եւ առաջին հերթին ձգտում էր այդ միությունը օգտագործել հայ ժողովրդի շահերի համար: Հայտնի է, որ նա, զիջումներ կատարելով դավանաբանական հարցերում, միաժամանակ անզիջում էր ծիսական հարցերում եւ պաշտպանում էր Հայ Եկեղեցու առանձնահատկություններն ու ավանդությունները:

Հայ եւ Կաթողիկէ Եկեղեցիների մերձեցման հարցերը քննարկվեցին նաև Սուի 1307թ., Աղանայի 1316թ. եւ այլ ժողովներում:

Հոռոմի Եկեղեցու հետ միաբանվելու ջերմ կողմնակիցներ էին Կիլիկիայի Հեթում Բ, Օշին թագավորներն ու Կոստանդին Գ Կեսարացի կաթողիկոսը, որին շատ հեղինակներ համարում են առաջին հայ «աղթարմա» կամ «ծայթ» կաթողիկոսը: 14րդ դերում Կիլիկյան Հայաստանում սկսվեց տարածվել ունիթորական կրոնական ուղղությունը, որի կրողներին սկսեցին անվանել Ունիթորներ (լատ. unitores- միացողների, միաբանողների եղբայրության): Նրանց Հայաստանում շատ դեպքերում անվանում էին նաև «ծայթ», «ախթարմա», «Փուանկ» եւ այլ անուններով:

«Փուանկ» անվանումը հավանաբար կապված է նրա հետ, որ Կիլիկիայում ակտիվորեն էին գործում հատկապես Ֆրանցիսկյան միաբանության քարոզիչները: Բացի այդ Հայաստանում «Փուանկ» էին անվանում ոչ միայն Փրանսիացիներին, այլ նաև գրեթե բոլոր եվրոպացիներին եւ խաչակիրներին:

Ունիթորները հատկապես ակտիվ էին գործում Նախիճեւանում եւ Սյունիքում: 1328թ. Հովհաննես վրդ. Քոնեցին Մարաղայում հիմնեց ունիթորների միաբանությունը: Իրենց դրական գործունեության հետ մեկտեղ՝ նրանցից շատերը գիտնականներ, հայագետներ, թարգմանիչներ, բնագետներ եւ բժիշկներ էին, նրանք շուտով մեծ հուզումներ առաջացրին Հայաստանում: Կուրորեն ընդունելով լատինական Եկեղեցու Դոգմաներն ու ծեսերը, նրանք այն փորձում էին կիրառել նաև Հայաստանում: Նրանք սկսեցին հերետիկոս

Համարել ամբողջ հայ ազգը, արհամարել Հայ Եկեղեցու ծեսերն ու դարավոր ավանդությները:

Այդ պատճառով էլ նրանք շուտով սկսեցին կորցնել իրենց հետեւվորդներին: Ունիթորների գործելակերպը խստորեն դատապարտել են ոչ միայն հայադավան հեղինակները, այլ նաև կաթողիկէ շատ հոգեվորականներն ու գործիչներ: Հոռմի Պապը, որին ստիպված էր եղել բողոքել Հակոբ Զուղայեցին, նրանց կոչ էր անում հրաժարվել այդպիսի գործելակերպից, լինել խոհեմ ու համակերպվող: Մ. Զամշյանը նրանցից երկուսին՝ Ուրմիայի եւ Կարնո եպիսկոպոսներին անվանում էր «արքանեակք չարի»: 1583թ. ունիթորները Հայաստանում ձուլվեցին դոմինիկյան միաբանության հետ:

Արդի հայ կաթողիկէ գաղափարախոսներից մեկը, Անդրանիկ վրդ. Կոանյանը գրում է. «Ժողովուրդներ ուժգնօրէ ն ընդդիմացած ու դարերով պայքար մղած են այն բոլոր օտար ազդակներուն դէմ, որոնք փորձում են օտարի լեզուով, օտարի հաւատքով, օտարի մշակոյթով, օտարի ծէսով թափանցել իրենց մշակոյթէն կամ պաշտամունքէն նէրս» («Պատրիարքական համագումար Հայ կաթողիկէ Եկեղեցւոյ», Զմմառ, 8-12 Հոկտեմբեր 1998, էջ 60):

Կաթողիկէ Եկեղեցին, անհանգստացած ունիթորների եւ լատին կրոնավորների գործելակերպից, 1695թ. ընդունեց մի որոշում, ըստ որի լատինները պետք է պահեն իրենց ծեսերը, արարողություններն ու սովորությունները, իսկ Արեւելյան կաթողիկէ Եկեղեցիները՝ իրենցը:

14-րդ դարի վերջին, երբ կործանվեց Կիլիկիայի հայկական թագավորությունը, անբարենպաստ պայմաններ ստեղծվեցին նաև Սսի Հայ կաթողիկոսական Աթոռի գործունեության համար: Օգտվելով այդ առիթից, Մեծ Հայքի հոգեվորականները 1441թ. ժողով գումարեցին էջմիածնում, գահալույծ հայտարարեցին Սսում գտնվող Մուսաբեկյանց կաթողիկոսին եւ ընտրեցին նոր կաթողիկոս: Մինչեւ օրս Մբ. էջմիածինը համարվում է Ամենայն Հայոց կաթողիկոսի նստավայրը: Մ. Օրմանյանը գտնում է, որ մինչեւ 1441թ., Կիլիկիայում իշխում էր լատինամետ ուղղությունը (Մ.Օրմանյան, նշվ. աշխ., էջ 96):

17-րդ դարում Արեւելքում ակտիվացան լատին քարոզիչները: Կաթողիկէությունը Արեւելքում եւ մասնավորապես Հայաստանում տարածելու նպատակով, Հոռմի Գրիգոր 15-րդ Պապը 1622թ. Հոռմում հիմնեց «Հավատի պրոպագանդայի Սուրբ Միաբանությունը» (Հայ կաթողիկէ գրականության մեջ այն կոչվում է նաև «Սուրբ Ժողով տէ փրոփականդայ Փիտե», «Սուրբ Ժողով Տարածման հավատոյ», «Արեւելքի Սուրբ Ժողով»): Նշենք, որ այդ հաստատությունը

1960-1971թ.թ. ղեկավարում էր նշանավոր կարդինալ
Գրիգոր-Պետրոս Աղաջանյանը:
 1627թ. Հռոմի Ուրբանոս Պապը, Քարոզիչներ
 պատրաստելու նպատակով, հիմնադրեց «Ուրբանյան դպրոցը»
 եւ տպարան՝ կաթողիկէ քարոզչական եւ աստվածաբանական
 գրականություն տարածելու համար:

Քարոզիչների գործունեությունը Հայաստանում հատկապես
 ակտիվացավ 17-րդ դարի 2-րդ կեսին: Հայաստանում գործում
 էին մի շարք վանական կարգեր. Փրանցիսկյան, օգոստոսյան,
 Կարմելյան, Հիսուսյան եւ այլն: Նրանց գործունեության
 հետեւանքով Արեւմտյան Հայաստանում եւ նրա սահմաններից
 դուրս առաջացան հայ կաթողիկէ մի շարք համայնքներ:
 Նրանց հաջողության պատճառը նաեւ բացատրվում է նրանով,
 որ հայերը հույս ունեին Հռոմի Պապի եւ եվրոպական
 պետությունների աջակցությամբ փրկվել թուրքական եւ
 պարսկական լծից:

Կաթողիկէություն ընդունեցին հատկապես այն գյուղերի
 կամ բնակավայրերի բնակիչները, որոնք, շրջապատված լինելով
 թուրք եւ քուրդ հրոսակախմբերով, կանգնեցված էին
 երկրնտրանքի առաջ՝ կամ բնաջնջվել ֆիզիկապաս կամ
 թուրքանալ եւ իսլամանալ: Մագդա Նեյմանը իր «Հայերը»
 գրքում ընդգծում է, որ հայերը կաթողիկէություն ընդունեցին
 ոչ թէ նրա համար, որ հրաժարվեին հայությունից, այլ
 առաջին երթին հայ մնալու համար (Մագդա Նեյման, նշվ.
 աշխ., էջ 10):

Հայոց Հայրապետները եւս հույս էին դնում Հռոմի
 Եկեղեցու հետ միաբանվելով, Հռոմի Պապի աջակցությամբ
 ազատագրվել օտար բռնակալների լծից: Հատկապես մեծ
 ջանքեր թափեց նշանավոր Հակոբ Զուզայեցի կաթողիկոսը: Նա
 նույնիսկ փորձ արեց մեկնելու Հռոմ եւ հանդիպելու Հռոմի
 Պապի հետ, սակայն հիվանդացավ եւ 1680թ. վախճանվեց Կ.
 Պոլսում: Հ. Զուզայեցին Հռոմի Պապին անվանում էր
 «Քրիստոսի փոխանորդ... գլուխ բովանդակ այս մեկ մարմնի...
 գերագույն պետ Տիեզերական Եկեղեցու...» (Հակոբ Դ
 Զուզայեցի, 1655-1680, Վ. Թերզեան, Պեյրութ, 1956, էջ 45-46):
 Հռոմի Եկեղեցու հետ հաշտեցման փորձեր ձեռնարկեցին նաեւ
 նրա հաջորդ երկու կաթողիկոսները, սակայն վերջնական
 համաձայնություն այդպես էլ չկայացավ:

5- Հայ կաթողիկէ Պատրիարքության ստեղծումը.

1461թ., թուրքական սուլթանի հատուկ Փիրմանով Կ.
 Պոլսում ստեղծվեց Հայ Առաքելական Պատրիարքությունը, որը
 վարում էր հայ համայնքի ոչ միայն հոգեւոր, այլ նաեւ
 աշխարհական գործերը: Թուրքերը հայերին, անկախ

դավանանքի. ճանաչեցին մեկ միլեթ (աղթ) եւ այդ պատճառով էլ, մինչեւ 1830թ. թուրքիայի տարածքում ապրող բոլոր հայ կաթողիկէները եւս ենթարկվում էին նույն պատրիարքին, հաճախում նույն եկեղեցիները, միեւնույն հոգեւորականներից ստանում Սբ. Խորհուրդները: Նույնիսկ մինչեւ 17-րդ դարի վերջերը, Հռոմեական վարժարաններում պատրաստված աբեղաներն ու քահանաները իրենց հոգեւոր դերը կատարում էին հայ առաքելական եկեղեցիներում: Ինչ խոսք, հայ ժողովրդի միասնության տեսակետից, այս փաստը դրական դեր էր խաղում: Սակայն սկսած 17-րդ դարի վերջերից դրությունը խիստ փոխվեց: Սկսվեցին փոխադարձ ամբաստանությունները, տեղի ունեցան անդամ մատնություններ: Պառակտման եւ հուզումների առաջացման մեղքը ընկնում է եւ հայ առաքելական եւ հայ կաթողիկէ (հատկապես լատինամետ) մի խումբ անհեռատես եւ տգետ հոգեվորականների վրա, որոնք իրենց անխոհեմ գործելակերպով էլ ավելի սրեցին դրությունը, պառակտեցին հայ ազգը: 1707թ. ամբաստանությունների զոհ դարձավ եւ գլխատվեց Կոմիտաս քահանան իսկ Սեբաստիայում՝ Հայո Միքայելը:

Կոմիտաս քահանան միակ հայն է, որն 1929թ. Հռոմի Պապի հրովարտակով դասվել է սրբերի՝ «Երեւելիների ու մարտիրոսների շարքու»:

1721թ. հայ կաթողիկէների զանգվածային ձերբակալություններ տեղի ունեցան Կարինում (Էրզրում): Այս ամենը չեր կարող անհետեվանք անցնել: Դեռ 1701թ. Միհիթար Սեբաստացին հիմնեց Միհիթարյան միաբանությանը, որը հաստատվեց Վենետիկից 4կմ հեռավորության վրա գտնվող Սբ. Ղազար կղզում: Այն գործում է մինչեւ օրս եւ շատ մեծ գործ է կատարում հայ մշակույթի, հայագիտության եւ պատմության ասպարեզներում:

1720թ. Լիբանանի մայրաքաղաք Բեյրութից մոտ 30կմ հեռավորության վրա գտնվող Քրեյմի Ամենասուրբ Փրկիչ վանքի մեջ հիմնադրվեց մեկ այլ՝ Անտոնյան միաբանությունը, որը, ի տարբերություն միհիթարյանների, զբաղվում էր գլխավորապես Հովհական գործերով: Բացի այդ նրանք ավելի հաշտվողական կեցվածք էին ընդունել Հռոմի աթոռի նկատմամբ: Այս միաբանությունը գործեց մինչեւ 19-րդ դարի 60-ական թվականները եւ լուծարվի ենթարկվեց Հռոմի Պապի հրովարտակով: Անտոնյանների հետնորդները, փաստորեն այժմ Քրեյմի վանքից ոչ շատ հեռու գտնվող Զմմառի Տիրամոր եկեղեցում հաստատված Զմմառյան միաբաններն են: Այս վանքը փաստորեն նեաւ հայ կաթողիկէ պատրիարքի նստավայրն է (չնայած որ բուն պատրիարքությունը գտնվում է Բեյրութի կենտրոնում -Ս.Ա.):

Այս միաբանությունների ստեղծումը սկսված պառակտման առաջին արդյունքներն էին: Հաշտեցման բոլոր փորձերը մատնվեցին անհաջողության: Հայ կաթողիկէ հոգեւորականներն ու հավատացյալները սկսեցին դիմել թուրքական իշխանություններին, որ իրենց համայնքը դուրս բերվի հայ առաքելական Պատրիարքի իշխանույունից եւ ճանաչվի որպես առանձին համայնք: **Այս** ուղղությամբ առաջին քայլը ձեռնարկեց Մարտինիի Եպիսկոպոս Մելքոն Թագպագյանը (Թասպասյան): Սակայն նա իր կողմնակիցների հետ ձերբակալվեց, դատապարտվեց շղթայակիր թիապարտության, որտեղ էլ մահացավ:

Հաջորդ քայլը կատարեց Աբրահամ եպիսկոպոս Արծիվյանը: Սկզբում նա եւս մի քանի անգամ ձեռբակալվեց եւ բանտ նետվեց, սակայն Փրանսիական դեսպանի միջնորդության եւ մանավանդ 733 դահեկան կաշառքի շնորհիվ, ազատ արձակվեց: Ապաստանելով Անտոնյան միաբանությանում նա շարունակեց գործել: 1740թ. Հալեպի հայ կաթողիկէ համայնքը նրան ընտրեց որպես հայ կաթողիկէ ների կաթողիկոս: Իր հերթին Արծիվյանը ձեռնադրեց երեք եպիսկոպոսների, որոնք դիմեցին Հռոմի Պապին՝ նրա կաթողիկոսությունը հաստատելու համար: Նույն խնդրանքով Հռոմի Բենեդիկտոս Պապին դիմեցին նաեւ մարոնի քահանաները եւ հավատացյալները:

1742թ. Արծիվյանը ջերմորեն ընդունվեց Հռոմի Պապի կողմից: Շատ չանցած՝ 1742թ. նոյեմբերի 26-ին գումարված կարդինալական ժողովը հաստատեց նրա պատրիարքական ընտրությունը: 1742թ. դեկտեմբերի 8-ին Բենեդիկտոս պապը Հռոմի Սանտա Մարիա եկեղեծում Աբրահամ Արծիվյանին օծեց որպես հայ կաթողիկէների Պատրիարք: Սակայն Արծիվյանը գերադասում էր կրել կաթողիկոս տիտղոսը եւ կոնդակներում ստորագրում էր «Պ.Կ.» (Պետրոս Կաթողիկոս): Սկսած նրանից մինչեւ օրս բոլոր հայ կաթողիկէ պատրիարքները կրում են Պետրոս անունը: Կաթողիկէ հեղինակները այն կապում են Կիլիկիայի Պետրոս Պիծակ կաթողիկոսի անվան հետ, որը Արծիվյանին եպիսկոպոս էր ձեռնադրել: Սակայն առավել հավանական է, որ այն կապված է Պետրոս առաքյալի անվան հետ եւ խորհրդանշում է Հռոմի պապի գերիշխանության ճանաչման փաստը:

Կաթողիկէ հոգեւոր առաջնորդները մինչեւ օրս էլ իրենց համարում են Սբ. Գրիգոր Լուսավորչի հետնորդներն ու գործի շարունակողները: Իր կտակում Արծիվյանը իրեն համարում էր «Պետրոս Առաջին Կաթողիկոս եւ Պատրիարք ամէնից հայոց եւ ճշմարտադաւան ուղղափառաց եւ փոխանորդ Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսավորչին...» (Աբրահամ-Պետրոս Ա Արծիւեան Կաթողիկոս, Պեյրութ, 1959, էջ 338): Հայ կաթողիկէների հոգեւոր առաջնորդները

պաշտոնապես հանդես են գալիս նաեւ
«Պատրիարք-Կաթողիկոս», «Պատրիարք», «Պատրիարք Տան
Կիլիկիոյ» եւ այլ տիտղոսներով։ Սկսած Արծիվյանից հայ
կաթողիկէները ունեցել են 19 Կաթողիկոս-Պատրիարքներ։
Ներկայումս հայ կաթողիկէների պատրիարք-կաթողիկոսն է
Ներսես-Պետրոս Ժօ Թարմունին (1999թ. մինչեւ օրս):

1937-1962թթ. հայ կաթողիկէների հոգեվոր առաջնորդն էր
նշանավոր կարդինալ Գրիգոր-Պետրոս ԺԶ Աղաջանյանը։
Չնայած Հռոմի պապը Արծիվյանի իրավասությանն էր հանձնել
բոլոր հայ կաթողիկէներին, սակայն այն փաստորեն չեր
կենսագործվում եւ նրա իշխանությունը տարածվում էր միայն
Կիլիկիայում ապրող հայ կաթողիկէների վրա։ Թուրքական
իշխանությունները ոչ Արծիվյանին եւ ոչ էլ նրա
հաջորդներին մինչեւ 1866թ. չժույլատրեցին գործել
թուրքիայում։ Բացի այդ, անմիջականորեն Հռոմի պապին էին
ենթարկվում Հռոմգարիայի եւ Լեհաստանի հայ կաթողիկէ
թեմերը ինչպես նաև Մարտինիի թեմը։ Հետագայում հայ
կաթողիկէ պատրիարքության իրավասության սահմաններից
դուրս մնաց նաև Ռուսաստանի հայկական համայնքը։

Դրա հետեւանքով, մինչեւ 1866թ., երբ կաթողիկէ
պատրիարքությունը Զմմառից տեղափոխվեց Կ. Պոլիս, հայ
կաթողիկէները ունէին երկու կենտրոն՝ Զմմառի
պատրիարքարանը, որի իշխանությունը տարածվում էր միայն
Կիլիկիայի հայ կաթողիկէների վրա եւ Կ. Պոլսինը, որի
իրավասության տակ էին Կ. Պոլսի եւ թուրքիայի այլ
վայրերի հայ կաթողիկէները։

Թուրքական իշխանությունների վերաբերմունքը հայ
կաթողիկէների նկատմամբ միշտ էլ եղել է երկդիմի։ Մի
կողմից, նրանց համար շատ ձեռնտու էր, որ հայ
ժողովուրդը բաժան-բաժան էր արվում կրոնական հողի վրա։
Մյուս կողմից, նրանք վախճանում էին, որ կաթողիկէների
պատճառով եվրոպեկան երկիրներն ու Հռոմի պապը ամեն
առիթով կսկսեն միջամտել իր ներքին գործերին (հայ
ժողովրդի կեղեքմանն ու ջարդերին -Ա.Ա.):

Այս պատճառով էլ շատ դեպքերում նրանց
վերաբերմունքը հայ կաթողիկէների նկատմամբ եղել է
թշնամական։ Նրանք ամեն մի պատրվակ օգտագործում էին
կաթողիկէներին հալածելու համար։ Երբ 1827թ. հոկտեմբերին
թուրքական նավատորմը պարտություն կրեց Ռուսաստանի,
Անգլիայի եւ Ֆրանսիայի միացյալ նավատորմից, սուլթանի
հատուկ ֆիրմանով, որպես այդ պետությունների լրտեսներ
ձերբակալվեցին եւ աքսորվեցին բազմաթիվ հայ կաթողիկէներ։
1828թ. հունվարին Անկարայից աքսորվեցին վեց հազար հայ
կաթողիկէներ իրենց 26 հոգեւորականների հետ։ Շուտով մեկ
այլ ֆիրմանով հայ կաթողիկէները հայտարարվեցին թուրքական
կայսրության թշնամիները։ Այդ ֆիրմանով Կ. Պոլսից պետք է

աքսորվեին հայ կաթողիկէ եպիսկոպոսն ու բոլոր
Հոգեւորականները: 1829թ. Հունվարի 27-ին Կ. Պոլսից
աքսորվեցին եւս 15 հազար հայ կաթողիկէներ, որոնց մի
մասը մահացավ ցրտից ու սովից: Շատերը այս բռնագաղթը
համարում են 1915թ. հայոց եղեռնի նախատիպը:

Միայն Հուսմի պապի եւ ելրոպական պետությունների
միջամտություններից հետո թուրքական սուլթանը ստիպված
եղավ դադարեցնել հայ կաթողիկէների հալածանքները: Էղիրնեի
պայմանագրի կետերից մեկի համաձայն 1830թ. Հունվարի
6-ին, թուրքական սուլթանը հայ կաթողիկէներին ճանաչեց
որպես առանձին միլլեթ (ազգ) եւ իրավունք շնորհեց
ունենալու իրենց առանձին հոգեւոր պետերը: Թուրքիայի հայ
կաթողիկէների առաջին հոգեւոր առաջնորդն ընտրվեց Անտոն
վրդ. Նուրիջանյանը, որը բարձրացվեց արքեպիսկոպոսի
աստիճանի:

Ինչ խոսք, դրանով եղած պառակտումը փաստ դարձավ:
Բայց միաժամանակ յուրաքանչյուր համայնք կարծես
պարփակվեց իր իրավասությունների սահմաններում եւ սկսեց
ինքը հոգալ իր համայնքի հարցերը:

Ռուսական կայսրությանում ապրող հայ կաթողիկէները
ենթարկվում էին Սարատովի լատին եպիսկոպոսին, որին խորթ
էին հայերին հուգող շատ հարցեր: Միայն բազմաթիվ
բողոքներից հետո, 1909թ. Սարգիս վրդ. Աբրահամյանը օծվեց
որպես հայ կաթողիկէների առաքելական կառավարիչ: 1917թ.
հայ կաթողիկէների առաքելական կառավարչությանը գլխավորեց
Հակոբ ծ.վ. Բագրատյանը (1930թ. նա ձերբակալվեց եւ

աքսորվեց Սոլովկի կղզին, որտեղ էլ մահացավ):

Հայոց մեծ եղեռնի տարիներին հայ կաթողիկէները եւս
վճարեցին իրենց արյան տուրքը: Թուրքական ջարդարանները
հայերին կոտորում էին ոչ թէ նրա համար, որ նրանք հայ
առաքելականներ էին, կամ հայ կաթողիկէներ: Նրանք
կոտորվեցին միայն նրա համար, որ... հայ էին: Կործանվեցին
թուրքիայի բոլոր հայ կաթողիկէ թեմերը, հափշտակվեց
եկեղեցիների, դպրոցների ունեցվածքը: Թուրքական
իշխանությունների տարածքում բնակվող ավելի քան 150
հազար հայ կաթողիկէներից հրաշքով փրկվեցին միայն 20
հազարը: Զոհերի թվում էին նաև 169 հոգեւորականներ եւ
61 Սարապետներ ու վանատենչիկներ: Տանջանքներից հետո
սպանվեցին հայ կաթողիկէ 10 եպիսկոպոսներ ու մեկ
արքեպիսկոպոս (իգնատիան Մալոյան):

Չնայած, որ ջարդերի հետեւանքով թուրքիայում մնացել
էր շատ փոքր հայ կաթողիկէ համայնք, հայ կաթողիկէ
Պատրիարքությունը դեռ մինչեւ 1928թ. շարունակում էր մնալ
Կ.Պոլսում: 1928թ. հայ կաթողիկէ Պատրիարքի աթոռը կրկին
տեղափոխվեց Լիբանան եւ հաստատվեց Զմմառի վանքում:

Հայ կաթողիկէների թվաքանակի մասին կան տարբեր տվյալներ որոնք տատանվում են 200-ից 300 հազարի սահմաններում։ Հայտնի է, որ 1916թ. հայ կաթողիկէնեղեցու «Օրացոյց»-ի տվյալներով Ռուսական կայսրությանում կային 61240 հայ կաթողիկէներ, (172 գյուղ ու քաղաք, 71 եկեղեցի, 63 քահանա և 8 վարդապետ)։ Այժմ Ռուսաստանում տարածքում ապրում են մոտ 54 հազար հայ կաթողիկէներ, որոնց սպասարկում է միայն մեկ վարդապետ։

Հայ կաթողիկէնեղեցու տվյալներով Հայաստանում 1997թ. ապրում էին մոտ 150 հազար և Վրաստանում՝ 50 հազար հայ կաթողիկէներ։ Ինչ խոսք, արտագաղթի հետեւանքով (հիմնականում Ռուսաստան) Հայաստանում մնացել է մոտ 120-125 հազար հայ կաթողիկէնեղեցու մոտ 25 հազար Վրաստանում (հիմնականում՝ Ախալցիխե, Ախալքալաքի և Նինոծմինդայի շրջաններում)։ Հայաստանի, Վրաստանի, Ռուսաստանի հոգեվելյան Եվրոպայի հայ կաթողիկէների հոգեւոր առաջնորդն է միիթարյան նշանավոր գրող, պատմաբան ու փիլիսոփա. Հ. Ներսես Արք. Տեր-Ներսեսյանը։ Նրա նստավայրը գտնվում է Գյումրի քաղաքում։

Հայ կաթողիկէների կյանքում կարեւոր իրադարձություն էր 1997թ. հոկտեմբերին Զմմառի վանքում կայացած պատրիարքական համագումրը, որին առաջին անգամը լինելով, մասնակցում էին նաև աշխարհական պատգամավորներ աշխարհի բազմաթիվ երկրներից։ Չնայած, որ Հայ կաթողիկէնեղեցին անվերապահորեն ընդունում է Հռոմի Աթոռի գերիշխանությունը, միաժամանակ եկեղեցական արարողությունների զգալի մասը կատարում է հայ Եկեղեցու ծեսերի ու ավանդությունների համաձայն, հայերեն լեզվով։ Մեծ ուշադրություն է հատկացվում հայապահպանման գործին, հայ մշակույթի պրոպագանդմանն ու տարածմանը։ Միայն Բեյրութում գործում են 9 կաթողիկէներ դպրոցներ ու վարժարաններ։

**Սալավաթ Վազգենի Արքան-
Պատմական գիտությունների դոկտոր**

(<http://www.armeniancatholic.ru>, 2002)